ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ № 2

№ ԳՀԱՊՁԲ-25-7/3-1 ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ

ք. Երևան 04.09.2026թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ Կ. Բրուտյանի, ով գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Գնորդ), մի կողմից, և «ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս ընկերության տնօրեն Գ. Մուրադյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա՝ այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, հիմք ընդունելով 05.02.2025թ. կնքված N ԳՀԱՊՁԲ-25-7/3-1 գնման պայմանագրին (այսուհետև՝ Պայմանագիր) կից № 1 Համաձայնագրի 2.2 կետը, փոխադարձ համաձայնությամբ կնքեցին սույն Համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. **Համաձայնագրի առարկան**

1.1 Կողմերը հիմք ընդունելով ֆինանսական միջոցներ հատկացված լինելու հանգամանքը՝ որոշեցին Սույն Համաձայնագրով սահմանել վճարման ժամանակացույց՝ համաձայն Հավելված № 1-ի:

2. **Համաձայնագրի գինը և վճարման կարգը**

2.1 Սույն Համաձայնագրով Վաճառողի կողմից մատակարարվելիք Ապրանքի միավորի գինը ներկայացված է սույն Համաձայնագրի №1 հավելվածում: Համաձայնագրի ընդհանուր գինը կազմում է է 2 400 000 /**երկու միլիոն չորս հարյուր հազար**/ ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ -ն: Ապրանքի գինը ներառում է հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները, Ապրանքի գրանցման հետ կապված, ինչպես նաև Վաճառողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

2.2 Գնորդն իրեն մատակարարված Ապրանքի դիմաց վճարումը կատարում է Պայմանագրի 3.3 կետով և սույն համաձայնագրի N 1 հավելվածով նախատեսված վճարման ժամանակացույցով սահմանված կարգով:

3. **Այլ պայմաններ**

3.1. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի փոխադարձ պարտավորությունների լրիվ կատարումը:

3.2 Սույն Համաձայնագրում չնշված՝ գնման Պայմանագրով նախատեսված դրույթները, պայմանները, Կողմերի իրավունքները և պարտականությունները, Ապրանքի մատակարարման, հանձնման-ընդունման, Կողմերի պատասխանատվության հետ կապված և այլ հարաբերություններ թողնվում են անփոփոխ:

3.3. Սույն Համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

3.4. Սույն Համաձայնագիրը հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը, կազմված է 2 էջից, հայերենով, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն Համաձայնագրի №1 հավելվածը հանդիսանում է Համաձայնագրի անբաժանելի մասը:

4. **Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունը:**

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք.Երևան,Բաշինջաղյան 2-դ նրբ., 10շ.,բն. 58.,
ՀՀ ՖՆ գործառնական վարչություն	Արդշինբանկ ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 2478103293490000
ՀՎՀՀ 02522157	ՀՎՀՀ 01336677
ՀՀ պաշտպանության նախարարի տեղակալ	Տնօրեն
Կ. ԲՐՈՒՏՅԱՆ	Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ

Հավելված N 1

Վճարման ժամանակացույց

ՀՀ դրամ

Գնման առարկայի անվանում		CPV	Նախատեսվում է ֆինանսավորել 2026թ. ըստ եռամսյակների, բայց ոչ ուշ, քան 25.12.2026թ.	
			3-րդ եռամսյակ	4-րդ եռամսյակ
1	լաբորատոր ագդանյութեր (ռեագենտներ) բազմակոմպոնենտ	33691420/272	2 400 000	2 400 000

Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:

ԳՆՈՐԴ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ Պաշտպանության նախարարի տեղակալ

Կ.ԲՐՈՒՏՅԱՆ

ՎԱՃԱՌՈՂ

«ԷՔՍՏՐԱ ՄՈԹՈՐՍ» ՍՊԸ
Տնօրեն

Գ. ՄՈՒՐԱԴՅԱՆ